ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2020թ. հուլիսի 21-ին. N 131

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱԳԱՐԱԿԻ Տ.ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի <<դ>> ենթակետով և 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի N 1641-Ն որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2017 թվականի հոկտեմբերի 23-ի N 130-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ագարակի Տ.Թերլեմեզյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 25-րդ կետում և 31-րդ կետի 1-ին ենթակետում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով,

2) 33-րդ կետի 4-րդ ենթակետը հանել,

3)33-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 13.1-ին ենթակետով.

«13.1) քննարկում է դպրոցի ծնողական խորհրդի՝ տնօրենի նկատմամբ անվստահության վերաբերյալ առաջարկը և այն, իր դիրքորոշման հետ միասին, ներկայացնում է լիազորված մարմնի ղեկավարին.»,

4)39-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ ենթակետով.

«4)խորհրդի յուրաքանչյուր նիստից հետո, երկու աշխատանքային օրվա ընթացքում, նիստի արձանագրությունը ներկայացնում է հրապարակման՝ դպրոցի պաշտոնական կայքում.»,

5)69-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«69.Տնօրենի բացակայության, ինչպես նաև տնօրենի պաշտոնի թափուր տեղ առաջանալու դեպքում լիազորված մարմինը՝ ըստ ենթակայության, հաստատության տնօրենի պաշտոնակատար է նշանակում տնօրենի տեղակալներից մեկին կամ հաստատության տնօրենի պարտականությունները կատարող այլ անձի, ով տվյալ հաստատության խորհրդի անդամ չէ: Տնօրենի պաշտոնի թափուր տեղ առաջանալու դեպքում տվյալ հաստատության տնօրենի լիազորությունները դադարեցված անձը չի կարող նշանակվել նույն հաստատության տնօրենի պաշտոնակատար կամ պարտականությունները կատարող:»,

6)77-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«77.Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողները:»,

7)93-րդ կետի 9-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9) մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ առաջարկություն.»:

2. Սույն փոփոխությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ագարակի Տ.Թերլեմեզյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության (գրանցված Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից 16.01.2003թ. գրանցման համար 56.210.00831) անբաժանելի մասը:

3.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ագարակի Տ.Թերլեմեզյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ իրականացնել սույն որոշմամբ հաստատված կանոնադրության փոփոխությունների պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

Недействительная подпись

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3[illegible]

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ